

Եւ ոչ թէ բանաստեղծներուն եւ ֆաբրիկներուն :  
Ով որ իր հզօր ձեռքին մէջ սուր մ'ունէր,  
Կրցաւ գրաւել ինքն իրեն համար պետութիւն  
մը,

Այս աշխարհը նման է նոր հարսի մը .  
Անոր վնիւրը հատու սուրին ձեռքն է .  
Ամուսնութեան համար անոր հետ,  
Վեհանձնօրէն կուտայի իմ հարստութիւնս .  
Ու ես հարցուցի այդ նոր հարսին,  
Թէ ո՞րն է այն օժիւրը, որով կարելի է իր ձեռ-  
քը առնել .

Ան պատասխանեց .— Ուժն ու յանդգնութիւ-  
նը . . .

Վերջապէս, աշխարհ կոչուած սիրուն հարսը  
կը յանձնուի մարդոց սուրին ու վեհանձնու-  
թեան :

Ես մնացած եմ գարմացած Աստուծոյ դատու-  
ղութեան,  
Քիւրդերն այս աշխարհային պետութեան մէջ  
ինչո՞ւ համար գրկուած մնացեր են .

Անոնք ամբողջ ինչո՞ւ դատապարտուեր են :  
Անոնք սուրը գիտեն բռնել համբաւուած ձե-  
ւով ;

Անոնք իրենց ուժով շատ երկիրներ գրաւած  
են ,

Ամէն մէկը անոնցմէ հատեմի վեհանձնու-  
թիւնն ունի ,

Ամէն մէկը անոնցմէ Ռոստեմի կտրուութիւնն  
ունի :

Տեսէ՛ք, Արաբիայէն մինչեւ Վրաստան,  
Քիւրդերն են որ բերդերու շրթայ են դարձած .  
Չորս անկիւնները բռնած են .

Թուրքերն ու Պարսիկները անոնց կ'ապաստա-  
նին :

Երկու սահմաններու վրայ գտնուող քիւրդ ա-  
շխրէթները ,

Դարձած են անկայուն ալիքներ :

Իւրաքանչիւր աշխրէթը անանցանելի պատ-  
ուար մըն է ,

Կարծես անոնք ըլլային սահմանի բանալին :

Այս թուրք ու տանիկ ծովին մէջ

Երբ յարձակողական շարժում մը ընեն անոնք ,  
Քիւրդերն են որ կը խեղդուին արեան մէջ .

Ու իրենք են որ իրար կը խողխողեն :  
Ազնուութիւն, ուժ եւ վեհանձնութիւն ,

Տղամարդութիւն, ջանասիրութիւն ու յանդը-  
նութիւն ,

Կատարեալ են քիւրդ աշխրէթներուն իմ :  
Անոնք ցոյց տուած են վեհանձնութիւն եւ յան-  
դըգնութիւն .

Որքան շատ կը ձգտին հերոսութեան ,  
Այս յանդգնութիւնն ու վեհանձնութիւնը  
Նոյնքան շնորհէ կը խրտչին :

Արգելք եղան որ քիւրդը երախտիքի բեռի տակ  
մնար :

Սակայն անոնք միշտ անհամբարշխ են .  
Միշտ կուրի եւ անհամաձայնութեան մէջ են :  
Եթէ մենք ունենայինք համերաշխութիւն մը ,  
Եթէ մենք մտածէինք մեր օգուտը ,  
Թուրքը, Արաբն ու Փարսը միասին ,  
Բոլորն ալ մեզի ծառայ պիտի ըլլային :

Այն ատեն, կ'ամբողջացնէինք կրօնն ու պե-  
տութիւնը ,

Ուսումն ու գիտութիւնը կ'իւրացնէինք ,

Կը բաժնուէինք ու կը մաքրուէինք այս հեթա-  
նոսներէն ,

Եւ կը ձգտէինք տէր դառնալ մեր կատարելու-  
թեան» :

*Եթէ, իրօք քիւրդ իշխանապետները ըն-  
դունակ ըլլային ըմբռնելու Ահմէտ Հանիի այս  
ազգային պետութիւն դառնալու յստակ ու յա-  
ռաջադէմ իտէալը, շատոնց բաժնուած ու  
մաքրուած կ'ըլլային թրքական խաւարէն, ու  
հասած կատարելութեան մը, ուր դիտութիւնն  
ու մշակոյթն ալ կը միանար իրենց բիրտ ու-  
ժին :*

*Թուրքերը հետզհետէ ձեռք կը քաշէին Եւ-  
րոպան աշխարհակալելու իրենց ցանկութիւն-  
ներէն եւ իրենց ուշադրութիւնը կը դարձնէին  
ամբանալու այն երկիրներու մէջ, որոնց դա-  
րեր առաջ տիրապետած էին անուանական կեր-  
պով :*

*Սուլթան Սէլիմ Ա.ի հետ կնքուած դաշ-  
նագիրը կամաց կամաց մոռացութեան կը տըր-  
ուէր : Թուրքիա իրական տիրապետութիւն մը  
կարենալ հաստատելու համար Քիւրդիստանի  
եւ Հայաստանի վրայ, նախ ջանքեր թափեց  
ջրդական իշխանապետութիւններու միջեւ ա-  
տելութիւն սերմանելու եւ դաւեր լարելու ի-  
րարու դէմ : Եւ որպէս զերիշխան պետու-*